ԺԵ·

Բարդողիմէոս վարդապետ այս գրով համառօտիւ կը ներկայացնէ՝ ի մէջ այլոց՝ Լիվոռնոյի մէջ Նոր Ցոմարը մտցնելու իր ջանքերը, անոնց շուրջ ծագած հրատապ հարցերն ու հետևանքները։

Գերապատուելոյ և սիրելագունեղի տն տն Մխիթար վարդապետի
և Աբբայի.

... Թէպէտ ըստ հրամանի Արքեպիսկոպոսին Փիզոյ զծնունդն փրկչին ըստ լաթինացւոց կատարեցի մեծաւ ցնծութեամբ, սակայն չար և անօրէն ռուստաին խռովեցուցանելով զդափանցիսն և զայլս ոմանս, սկսան աղմկել թէ և մեք այսուհետև չեմք իտար ըստրլաճ եկեղեցւոյ, և չեմք ուզեր զեկեղեցին Հայոց, որ զոլով դժուար կռիւ, հարկ եղև քէլէնթերին, որ կամէր միատեղ լինիլն զծնունդն, առաքել զպարոն յոհանճանն առ Աբհի եպիսկոպոսն, որ տեսեալ զայսպիսի խռժամուժ մարդկան զաղմուկն, և զտարաձայնութիւնն, կամ վասն աներևոյթ պատճառի, կամ վասն ոչ առնելոյ յանձն զայսպիսի խռովութիւնս չիջուցանելոյ, զի առանց հրամանի Կռանտուգային զոչինչ առնէ, գրեաց ինձ, թէ թոյլ տուր, և զանց արա զոր ինչ խնդրեն Հայք, զի ժամանակն ոչ է դիպուկ, միայն թէ զմասունս Հաւատոյ, և զկանոնադրութիւնս սուրբ ժողովին պահպանել և ի կիր արկանել ջանա, և այլն։ Վասն որոյ կրկին հարկ եղև զհին ոսմարն բանեցնել, և զջուրօրհնէքն Հայոց նայսմիկ երեք չափաթոցն կատարել։

Իմացանք ասա յալիկոռնայ թէ մեծ հալածում է եղեալ յարևելս, այսպէս գրեալ էր ինձ մինաս վարդապետն սեբաստիոյ հանդերձ բազմաւ բանիւ, նաև լուաք ի բերանոյ Ղափուճին պատրիներոյն, որք եկին ասա ի թիֆլիզոյ, և ասացին թէ հայք հրամանաւ կաթողիկոսին մերոյ Աստուածատուրին քանտեցին զեկեղեցին մեր նոր ի Թիֆլիզ, և զսրբութիւնն մեր կոխան ոտից արարին և զմենաստանն մեր այրեցին, այս լուր գրիւ ևս հաւաստեցաւ, որ առ սուրբ ժողովն, առաւել ևս կամեցեալ է կաթողիկոսն հայոց զբոլոր ջահկցոց եկեղեցիսն բլցնել, որք դէմ կալով Լաթիներուն Վրացոց Հայոց, դիմեր են աղաղակաւ առ Շահն, և միջնորդութեամբ Նշչին Ֆռանչայոյ ծանուցեր են թագաւորին զչարիսն, զոր գործէ կաթողիկոսն Հայոց, և թագաւորն հրաման արած լինի ֆէրմանով, թէ ուր ուրեք գտանիցի կաթուղիկոսն Հայոց, ճղեսցեն զփորն նորա, և զկաշին գլխոյ նորա բերցեն առ ինքն, և նա վրաստան ի քաղաքն Կորի փախած լինի...։

յԱիկուռնայ թուին փրկչին
1719 յունվարի 23

Նուաստագունեղ ծառայ
Բարդուղիմէոս վարդապետ
միսիոնար առաքելական

ԺԶ·

Այս նամակը ղրկուած է Հռովմայ Ուրբանեան Վարժարանի Ստեփանոս անուն աշակերտէ մը, որ Աստուածաբանութեան դասընթացքը լմնցնելու վրայ էր, ինչպէս կը կարդանք իր մէկ յաջորդ նամակին մէջ (տես Schiar. Documenti)։

Մասնաւոր ուշադրութեան արժանի են նամակագրին խօսքերը ուղղուած առ Մեծ Սեբաստացին։